Առաջին 1000 խոշոր հարկատուների կողմից 2024թ. հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2024թ. հունվար-հունիս ամիսներին առաջին 1000 խոշոր հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է 900 մլրդ դրամ, ինչը ընդամենը 3%-ով է բարձր նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: 2023-ին և 2022-ին աճերը անհամեմատ ավելի մեծ էին՝ համապատասխանաբար 21% և 33% (գծապատկեր 1): Ըստ էության, 2023-ի համեմատությամբ 2024-ի ցուցանիշի խիստ զուսպ աճը տնտեսությունում «ոչ հարկունակ» հատվածների հարաբերական դերակատարության մեծացման արդյունք է, երբ տնտեսական ակտիվության երկնիշ աճի պայմաններում հարկային մուտքերի շատ ավելի չափավոր ավելացում է արձանագրվում:



Գծապատկեր 1. Հունվար-հունիս ամիսներին առաջին 1000 խոշոր հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2024թ. առաջին կիսամյակում, նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ուշագրավ փոփոխություններ են արձանագրվել նաև 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության պարագայում: Այսպես, 2024-ի հունվար-հունիս ժամանակահատվածում 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել շուրջ 222 մլրդ դրամ հարկ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 34 մլրդ դրամով (գծապատկեր 2): Այս փաստը պայմանավորված է գլխավորապես ցանկի առաջին երկու համարների կողմից վճարած հարկերի՝ նախորդ տարվա համեմատությամբ ավելի քան 45 մլրդ դրամ ավելացմամբ: Առաջին 100 խոշոր հարկատուների պարագայում 2024-ի առաջին

կիսամյակում հարկային վճարումները, նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 38 մլրդ դրամով:



Գծապատկեր 2. Հունվար-հունիս ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

Ցանկի առաջին տասնյակի հարկատուների մասնաբաժինը 1000 հարկատուների վճարած հարկերի կառուցվածքում 2024թ. առաջին 6 ամիսների արդյունքներով կազմել է շուրջ 25 տոկոս, ինչը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 3 տոկոսային կետով: Նույն կերպ, առաջին 100-ի մասնաբաժինը կազմել է 59% կամ նախորդ տարվա մակարդակից 2,7 տոկոսային կետով բարձր (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Հունվար-հունիս ամիսներին 10 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մասնաբաժինը առաջին 1000 խոշոր հարկ վճարողների վճարած հարկերի ընդհանուր գումարի կառուցվածքում, տոկոսներով

2023-ի համեմատությամբ 4,5% կրճատում է արձանագրել 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջին հարյուրյակում տեղ զբաղեցրած ընկերությունների կողմից վճարված հարկերի մեծությունը: Այսպես, ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2024թ. հունվար-հունիս ամիսներին կազմել է 16,9 մլրդ դրամ՝ 2023-ի 17,7 մլրդ դրամի փոխարեն (գծապատկեր 4): 2023-ին 2022-ի համեմատությամբ պատկերը հակառակն էր՝ առկա էր մոտ 40 տոկոս աճ:



Գծապատկեր 4. Առաջին 1000 խոշոր հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2024թ. առաջին կիսամյակի համար կազմել է 31 անգամ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ բարձր է 3 միավորով: Առաջին և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2024-ին 139 անգամ է, ինչը ևս զգալիորեն բարձր է, քան նախորդ տարում գրանցված հարաբերակցությունը (գծապատկեր 5):



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ

2024թ. հունվար-հունիս ամիսների արդյունքներով ՀՀ-ում գործող 153 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2023-ին այդպիսի հարկատուների թիվը ավելի շատ էր՝ 162, իսկ 2022-ին՝ 114: Նույն կերպ, 2024-ի հունվար-հունիս ամիսների արդյունքներով, 320 ընկերության և կազմակերպության հարկային վճարումների գումարը գերազանցել է 500 մլն դրամը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի հարկատուների թիվը գրեթե նույնն էր՝ 318:



Գծապատկեր 6. Առաջին 1000 խոշոր հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

2024-ին ցանկում ներառված հարկատուներից 181-ը վճարած հարկերի ցուցանիշով չէր գերազանցել 200 մլն դրամի շեմը: Նախորդ տարվա առաջին կիսամյակում այդպիսի հարկատուները ավելի քիչ էին՝ 145, բայց 2022-ին ու դրանից առաջ՝ էլ ավելի շատ (գծ. 6):

Առաջին 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2024թ. առաջին կիսամյակում պետք էր վճարել շուրջ159 մլն դրամ, այն դեպքում, երբ 2023-ին ցանկում ներառվելու համար անհրաժեշտ կլիներ 170 մլն դրամի, իսկ 2022-ին՝ 120 մլն դրամի չափով հարկային պարտավորությունների կատարումը:



Գծապատկեր 7. Առաջին 1000 խոշոր հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, ըստ առանձին հարկատեսակների, հունվար-հունիս, մլրդ դրամ

Առաջին 1000 խոշոր հարկատուների կողմից վճարած հարկերի ծավալում գերակշռում է ԱԱՀ-ը: Դրա մեծությունը 2024թ. առաջին կիսամյակում կազմել է 338 մլրդ դրամ, ինչը շուրջ 6 մլրդ դրամով պակաս է նախորդ տարվա մակարդակից: Ակցիզային հարկերի մասով հավաքագրումը նախորդ տարվա համեմատությամբ չի փոխվել և կազմել է 56 մլրդ դրամ:

Շահութահարկի վճարումը առաջին 1000 խոշոր հարկատուների կողմից կազմել է 192 մլրդ դրամ, ինչը ընդամենը 4 մլրդ դրամով է ավելի նախորդ տարվա առաջին կիսամյակի արդյունքից:

Ի տարբերություն վերը նշված երեք հարկատեսակների, եկամտային հարկի գծով վճարումների մասով նշանակալի ավելացում կա. 2024թ. հունվար-հունիսին

հավաքագրվել է 170 մլրդ դրամ, ինչը 18 տոկոսով կամ 26 մլրդ դրամով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակը (գծ. 7):

2024-ի հունվար-հունիս ամիսների արդյունքներով, ՀՀ-ում 287 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 100 մլն դրամը, նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 276 էր: Նույն կերպ, 333 հարկատուի վճարած եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 100 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այսպիսի հարկատուների թվաքանակը ավելացել է 56-ով (գծ. 8):



Գծապատկեր 8. Առաջին 1000 խոշոր հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի աճը: 2024թ. առաջին կիսամյակում 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 40,2%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 38,0% էր (գծ. 9):

1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 39%-ը ուղղակի հարկերն են ինչը մի կողմից գրեթե նույնական է նախորդ տարվա մակարդակի հետ, սակայն էապես բարձր է դրան նախորդող մի քանի տարիների ցուցանիշից :



Գծապատկեր 9. Առաջին 1000 խոշոր հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2024թ. առաջին վեց ամիսների արդյունքներով, 132 հարկատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 500 մլն դրամը: Նախորդ տարի այդպիսի կազմակերպությունների թիվը 122 էր, իսկ 2022-ին՝ 89:

2024թ. հաշվետու ժամանակահատվածում 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 574 ընկերություններ, 2023-ին հանրապետությունում գործել է 490 այդպիսի կազմակերպություն (գծ. 10):



Գծապատկեր 10. Առաջին 1000 խոշոր հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Այսպիսով, 2024թ. հունվար-հունիս ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական ընկերության՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը որոշակիորեն տարբերվում է նախորդ տարիների պատկերից (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ցանկի առաջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը

	2018	2019	2020	2021	2022	2023	2024
Ընդամենը, մլրդ դրամ	2.8	3.1	3.0	3.1	4.5	4.9	5.3
Շահութահարկ, մլն դրամ	597	691	521	502	845	1240	1220
Եկամտային հարկ, մլն դրամ	406	528	525	525	563	714	865
ԱԱՀ, մլրդ դրամ	1.07	1.22	1.21	1.27	1.49	1.82	1.85
Ակցիզային հարկ, մլն դրամ	765	373	413	292	346	450	449

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024-ի առաջին կիսամսյակում վճարել է 5,3 մլրդ դրամի հարկ (2023-ին՝ 4,9 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 1,2 մլրդ դրամ (2023-ին՝ գրեթե նույնքան), եկամտային հարկը՝ 865 մլն դրամ (2023-ին՝ 714 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 1,85 մլրդ դրամ (2023-ին՝ 1,82 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 449 մլն դրամ (2023-ին՝ 450 մլն դրամ):

Աղյուսակ 2. Ցանկի վերջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը, մլն դրամներով

	2018	2019	2020	2021	2022	2023	2024
Ընդամենը	67	85	79	99	126	177	169
Շահութահարկ	11.9	19.7	15.4	11.4	14.4	23.4	30.7
Եկամտային հարկ	19.1	25.8	25	21.5	29.8	39.4	39.6
ԱԱՀ	33	37.1	34.2	51.3	63.1	79	75.4
Ակցիզային հարկ	12.7	2.8	2.8	2.8	2.5	2.4	1.5

Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024թ. առաջին վեց ամիսների արդյունքներով վճարել է 169 մլն դրամի հարկ (2023-ին ավելի շատ՝ 177 մլն դրամ), շահութահարկը՝ 30,7 մլն դրամ (2023-ին՝ 23,4 մլն դրամ), եկամտային հարկը՝ 39,6 մլն դրամ (2023-ին՝ գրեթե նույնքան), ԱԱՀ-ն՝ շուրջ 75 մլն դրամ (2023-ին ավելի շատ՝ 79 մլն դրամ), ակցիզային հարկը՝ 1,5 մլն դրամ (նախորդ տարի ավելի շատ՝ 2,4 մլն դրամ):

Դիտարկվող ժամանակահատվածում նշանակալի կերպով փոխվել է նաև ցանկում ներառված հարկատուների տարածքային բաշխվածությունը: Այսպես,

Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 82%-ն է, ինչը նախորդ տարվա համեմատ բարձր է 3 տոկոսային կետով: Մյուս կողմից՝ նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2024-ին կազմել է 80,5%, ինչը 1 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա մակարդակից (գծ. 11)



Գծապատկեր 11.Երևանի մասնաբաժինը, տոկոսներով

Աղյուսակ 3-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ զբաղեցրած մի շարք կազմակերպությունների կողմից հունվար-հունիս ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2023-2024թթ. ընթացքում: Ընտրված թվով 100 կազմակերպությունների մոտ 60 տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ որոշակիորեն ավելացրել են վճարված հարկերի մեծությունը: 26 հարկատու նախորդ տարվա համեմատությամբ հարկային վճարումները գերազանցել է առնվազն 1 մլրդ դրամով:

Այս առումով առաջատար են ԶՊՄԿ-ն՝ +29,2 մլրդ դրամ, Մոբայլ Սենթր Արթը՝ +16,5 մլրդ դրամ, Ագարակի ՊՄԿ-ն՝ +4,4 մլրդ դրամ, Գրանդ Տոբակոն՝ +3,4, Սոֆթ Կոնստրակտը՝ +3,6 մլրդ դրամ:

Դիտարկվող ընկերությունների շարքում 14 հարկատու նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ պակաս է վճարել 1 մլրդ և ավելի դրամի չափով հարկ: Այս ցուցիչով առանձնանում են Արդշինբանկը՝ -13 մլրդ դրամ, «Գազպրոմ Արմենիա»-ն՝ -3 մլրդ դրամ, «Ջեյ Թի Այ Արմենիա», «ՎԻԷՄ Արմենիա» ընկերությունները և Էվոկաբանկը՝ յուրաքանչյուրը -2,9 մլրդ դրամ:

Աղյուսակ 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը, մլրդ դրամներով

Տեղը ցանկում	Կազմակերպության անվանումը	2023	2024	Փոփ., %	Տարբ,, մլրդ դրամ
1	ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	34.8	64.0	*84*	*29.2*
2	ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ	15.8	32.3	*105*	*16.5*
3	ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ	30.6	27.6	*-10*	*-3.0*
4	ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ	20.2	23.6	*17*	*3.4*
5	ՓՐԻԹԻ ՈՒԵՅ	15.7	17.7	*13*	*2.0*
6	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	19.9	17.5	*-12*	*-2.4*
7	ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ	8.1	10.7	*32*	*2.6*
8	ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ	10.3	9.8	*-5*	*-0.5*
9	ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ	5.7	9.3	*64*	*3.6*
10	ՍԻԹԻ	7.4	9.2	*25*	*1.8*
11	ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ	11.3	8.8	*-22*	*-2.5*
12	ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ	8.2	8.8	*7*	*0.6*
13	ԱԿԲԱ ԲԱՆԿ	8.9	8.7	*-3*	*-0.2*
14	ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ	8.1	8.4	*4*	*0.3*
15	ԻՆԵԿՈԲԱՆԿ	7.3	8.2	*12*	*0.9*
16	ՖԼԵԾ	7.2	6.7	*-7*	*-0.5*
17	ԿԱԲԱՐԿՈ	4.5	6.4	*43*	*1.9*
18	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ	5.1	6.4	*25*	*1.3*
19	ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ	9.2	6.3	*-32*	*-2.9*
20	ԴԻՋԻԹԵՅՆ	2.9	6.2	*114*	*3.3*
21	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	18.9	5.9	*-69*	*-13.0*
22	ՄԱՔՍ ՕԻԼ	5.4	5.8	*8*	*0.4*
23	ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ	4.7	5.7	*21*	*1.0*
24	ՅՈՒՆԻԲԱՆԿ	2.2	5.5	*150*	*3.3*
25	ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ	4.5	5.4	*21*	*0.9*
26	ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ	5.3	5.4	*1*	*0.1*
27	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	5.4	5.3	*-3*	*-0.1*
28	ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	0.7	5.1	*623*	*4.4*
29	ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ	5.7	4.6	*-18*	*-1.1*
30	ՅՈՒՔՈՄ	6.9	4.3	*-37*	*-2.6*
31	Այդի Բանկ	4.6	4.3	*-6*	*-0.3*
32	ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ	3.4	4.3	*25*	*0.9*
33	ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ	3.9	4.2	*7*	*0.3*
34	ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ	3.8	4.0	*6*	*0.2*
35	ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ	3.9	3.9	*0*	*0.0*
36	ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ	3.3	3.9	*18*	*0.6*
37	ԱԹԵՆՔ	2.2	3.9	*76*	*1.7*
38	ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ	2.9	3.8	*30*	*0.9*
39	ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ	5.2	3.7	*-29*	*-1.5*
40	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	3.9	3.7	*-5*	*-0.2*

41	ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ	2.7	3.7	*37*	*1.0*
42	ԷՎՈԿԱԲԱՆԿ	6.5	3.6	*-44*	*-2.9*
43	ՄԵԳԱ ԹՐԵՅԴ	4.7	3.6	*-24*	*-1.1*
44	ԴԵԿՈՐԱ-ԳՐՈՒՊ	3.5	3.5	*-1*	*0.0*
45	ՍՊՍ ՍԻԳԱՐՈՆ	2.3	3.4	*49*	*1.1*
46	ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ	2.1	3.4	*63*	*1.3*
47	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	2.6	3.2	*23*	*0.6*
48	ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ	3.1	3.1	*1*	*0.0*
49	ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ ՏՐԱՆՍԳԱԶ	2.9	3.0	*5*	*0.1*
50	ԹԵՂՈՒՏ	1.6	3.01	*88*	*1.4*
51	ԱՆԴԱԿՈ	2.9	2.96	*2*	*0.1*
52	ՕՆԻՐԱ ՔԼԱԲ	3.6	2.95	*-18*	*-0.7*
53	ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ փակ բաժնետիրական ընկերություն	0.8	2.93	*266*	*2.1*
54	ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ	2.6	2.92	*12*	*0.3*
55	ԲԱՐՍԻՍ	2.8	2.77	*-1*	*0.0*
56	ՖԱՍԹ ԲԱՆԿ	2.3	2.76	*20*	*0.5*
57	ԿԵՀ ԱՐՄԵՆԻԱ	2.2	2.69	*22*	*0.5*
58	ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ	2.2	2.66	*21*	*0.5*
59	ՆԵՎԻՍ	1.9	2.59	*37*	*0.7*
60	ՌԳ ԳՐՈՒՊ		2.53		*2.5*
61	ՍԱՍ-ԳՐՈՒՊ	2.7	2.48	*-8*	*-0.2*
62	ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ	4.7	2.48	*-47*	*-2.2*
63	Ա ՏՈԲԱԿԿՈ ՔՈՄՓԱՆԻ		2.48		*2.5*
64	ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ	3.2	2.46	*-23*	*-0.7*
65	ԱՍԿԵ ԳՐՈՒՊ	2.9	2.44	*-16*	*-0.5*
66	ՍԼԱՎ ԳՐՈՒՊ	2.6	2.43	*-7*	*-0.2*
67	ԹԻԲԻ ԱՐՄ		2.37		*2.4*
68	ԱՎԱՆԳԱՐԴ ՄՈԹՈՐՍ	3.6	2.35	*-35*	*-1.3*
69	ԴԱՅՄՆԴ ՍՏԱՆԴԱՐՏ		2.30		*2.3*
70	ԴԵՐԺԱՎԱ-Ս	2.3	2.30	*0*	*0.0*
71	ՆՈՐ ԶՈՎՔ	3.2	2.29	*-29*	*-0.9*
72	Կուբ Ինվեսթ ՓԲԸ		2.28		*2.3*
73	ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ	1.4	2.25	*67*	*0.9*
74	ԹԵԼ-ՍԵԼ	3.0	2.23	*-24*	*-0.7*
75	ԼԵՔՍ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ	1.4	2.19	*56*	*0.8*
76	ԱՐՄԲՐՈԿ	2.0	2.18	*9*	*0.2*
77	ԱԳ ԻՄՊԵՔՍ	2.7	2.18	*-19*	*-0.5*
78	ԱՐԿԱԹ	1.7	2.13	*25*	*0.4*
79	ԲԱԼՉՈՒԳ ԿԱՊԻՏԱԼ	0.2	2.12	*958*	*1.9*
80	ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ	2.0	2.10	*8*	*0.1*
81	ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ	1.2	2.04	*70*	*0.8*
82	ՎԻԷՄ ԱՐՄԵՆԻԱ	4.9	2.00	*-59*	*-2.9*
83	ԷՊԱՄ ՍԻՍԹԵՄԶ	2.7	1.98	*-27*	*-0.7*
84	ՑԵՊԵԼԻՆ ԱՐՄԵՆԻԱ	1.9	1.97	*3*	*0.1*
85	ՍՊԱՅԿԱ	1.4	1.94	*44*	*0.6*

86	ԱԴԱՄԻՈՒՄ	1.8	1.92	*7*	*0.1*
87	ԸԼԱՅՆ ԹԵՔՆՈԼՈՋԻ	1.4	1.90	*40*	*0.5*
88	ՊՈՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ	1.0	1.85	*85*	*0.9*
89	ՍԵՐՎԻՍԹԱՅԹԱՆ ԱՐԵՎԵԼՔ	1.7	1.76	*3*	*0.1*
90	Դ ԵՎ Ս ՔՈՆՍԹՐԱՔՇՆ	0.9	1.74	*103*	*0.9*
91	ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ	2.0	1.73	*-13*	*-0.3*
92	ԲԱՂՐԱՄՅԱՆ	3.3	1.73	*-47*	*-1.6*
93	ՉՎԱՐԹՆՈՑ ՀԵՆԴԼԻՆԳ	1.7	1.70	*0*	*0.0*
94	ԱԷՐՈՖԼՈՏ- ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ	1.4	1.69	*21*	*0.3*
95	ՊԻԿՍԱՐՏ	2.0	1.66	*-17*	*-0.3*
96	ՎԱԳԱ-ՖԱՐՄ	1.5	1.63	*8*	*0.1*
97	ԷԼՔՈՐ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ	1.7	1.63	*-4*	*-0.1*
98	ՋԵՐՄՈՒԿ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼՊԵՊՍԻ-ԿՈԼԱ ԲՈԹԼԵՐ	1.2	1.62	*35*	*0.4*
99	ԱՄՊԵՐ	0.7	1.62	*131*	*0.9*
100	ՎԵԴԻ-ԱԼԿՈ	0.4	1.62	*305*	*1.2*

Ամփոփում

Առաջին 1000 խոշոր հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2024թ. հունվար-հունիս ամիսների արդյունքներով նշանակալի ծավալային և կառուցվածքային փոփոխություններ է արձանագրել.

- ✓ 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է մոտ 900 մլրդ դրամ, ինչն ընդամենը 3%-ով է բարձր նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: 2023-ին և 2022-ին աճերը անհամեմատ ավելի մեծ էին՝ համապատասխանաբար 21% և 33%,
- ✓ 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել շուրջ 222 մլրդ դրամ հարկ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 34 մլրդ դրամով: Այս փաստը պայմանավորված է գլխավորապես ցանկի առաջին երկու համարների կողմից վճարած հարկերի՝ նախորդ տարվա համեմատությամբ ավելի քան 45 մլրդ դրամ ավելացմամբ:
- ✓ Առաջին 100 խոշոր հարկատուների պարագայում 2024-ի առաջին կիսամյակում հարկային վճարումները, նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 38 մլրդ դրամով::
- ✓ Ցանկի առաջին տասնյակի հարկատուների մասնաբաժինը 1000 հարկատուների վճարած հարկերի կառուցվածքում 2024թ. առաջին 6 ամիսների արդյունքներով կազմել է շուրջ 25 տոկոս, ինչը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 3 տոկոսային կետով: Նույն կերպ, առաջին 100-ի մասնաբաժինը կազմել է 59% կամ նախորդ տարվա մակարդակից 2,7 տոկոսային կետով բարձր:
- ✓ 2023-ի համեմատությամբ 4,5% կրճատում է արձանագրել 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջին հարյուրյակում տեղ զբաղեցրած ընկերությունների կողմից վճարված հարկերի մեծությունը. այն 2024թ. հունվար-հունիս ամիսներին կազմել է 16,9 մլրդ դրամ՝ 2023-ի 17,7 մլրդ դրամի փոխարեն: 2023-ին 2022-ի համեմատությամբ պատկերը հակառակն էր՝ առկա էր մոտ 40 տոկոս աճ:
- ✓ 1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2024թ. առաջին կիսամյակի համար կազմել է 31 անգամ, ինչը նախորդ տարվա

համեմատությամբ բարձր է 3 միավորով: Առաջին և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2024-ին 139 անգամ է, ինչը ևս զգալիորեն բարձր է, քան նախորդ տարում գրանցված հարաբերակցությունը,

- ✓ 202ձթ. առաջին կիսամյակի արդյունքներով՝
  - 153 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2023-ին այդպիսի հարկատուների թիվը ավելի շատ էր՝ 162, իսկ 2022-ին՝ 114,
  - 320 ընկերության և կազմակերպության հարկային վճարումների գումարը գերազանցել է 500 մլն դրամը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի հարկատուների թիվը գրեթե նույնն էր՝ 318,
  - ներառված հարկատուներից 181-ը վճարած հարկերի ցուցանիշով չէր գերազանցել 200 մլն դրամի շեմը: Նախորդ տարվա առաջին կիսամյակում այդպիսի հարկատուները ավելի քիչ էին՝ 145, բայց 2022-ին ու դրանից առաջ՝ էլ ավելի շատ,
  - Առաջին 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2024թ. առաջին կիսամյակում պետք էր վճարել շուրջ159 մլն դրամ, այն դեպքում, երբ 2023-ին ցանկում ներառվելու համար անհրաժեշտ կլիներ 170 մլն դրամի, իսկ 2022-ին՝ 120 մլն դրամի չափով հարկային պարտավորությունների կատարումը,
  - Առաջին 1000 խոշոր հարկատուների կողմից վճարած հարկերի ծավալում գերակշռում է ԱԱՀ-ը: Դրա մեծությունը 2024թ. առաջին կիսամյակում կազմել է 338 մլրդ դրամ, ինչը շուրջ 6 մլրդ դրամով պակաս է նախորդ տարվա մակարդակից: Ակցիզային հարկերի մասով հավաքագրումը նախորդ տարվա համեմատությամբ չի փոխվել և կազմել է 56 մլրդ դրամ:
  - Շահութահարկի վճարումը առաջին 1000 խոշոր հարկատուների կողմից կազմել է 192 մլրդ դրամ, ինչը ընդամենը 4 մլրդ դրամով է ավելի նախորդ տարվա առաջին կիսամյակի արդյունքից:
  - Ի տարբերություն վերը նշված երեք հարկատեսակների, եկամտային հարկի գծով վճարումների մասով նշանակալի ավելացում կա. 2024թ. հունվար-հունիսին հավաքագրվել է 170 մլրդ դրամ, ինչը 18 տոկոսով կամ 26 մլրդ դրամով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակը

- ՀՀ-ում 287 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 100 մլն դրամը, նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 276 էր,
- 333 հարկատուի վճարած եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 100 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այսպիսի հարկատուների թվաքանակը ավելացել է 56-ով
- 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 40,2%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 38,0% էր
- ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 39%-ը ուղղակի հարկերն են ինչը մի կողմից գրեթե նույնական է նախորդ տարվա մակարդակի հետ, սակայն էապես բարձր է դրան նախորդող մի քանի տարիների ցուցանիշից,
- 132 հարկատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 500 մլն դրամը: Նախորդ տարի այդպիսի կազմակերպությունների թիվը 122 էր, իսկ 2022-ին՝ 89,
- 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 574 ընկերություններ, 2023-ին հանրապետությունում գործել է 490 այդպիսի կազմակերպություն

✓ Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024-ի առաջին կիսամսյակում վճարել է 5,3 մլրդ դրամի հարկ (2023-ին՝ 4,9 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 1,2 մլրդ դրամ (2023-ին՝ գրեթե նույնքան), եկամտային հարկը՝ 865 մլն դրամ (2023-ին՝ 714 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 1,85 մլրդ դրամ (2023-ին՝ 1,82 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 449 մլն դրամ (2023-ին՝ 450 մլն դրամ):

✓ Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024թ. առաջին վեց ամիսների արդյունքներով վճարել է 169 մլն դրամի հարկ (2023-ին ավելի շատ՝ 177 մլն դրամ), շահութահարկը՝ 30,7 մլն դրամ (2023-ին՝ 23,4 մլն դրամ), եկամտային հարկը՝ 39,6 մլն դրամ (2023-ին՝ գրեթե նույնքան), ԱԱՀ-ն՝ շուրջ 75 մլն դրամ (2023-ին ավելի շատ՝ 79 մլն դրամ), ակցիզային հարկը՝ 1,5 մլն դրամ (նախոորդ տարի ավելի շատ՝ 2,4 մլն դրամ):

✓ Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 82%-ն է, ինչը նախորդ տարվա համեմատ բարձր է 3 տոկոսային կետով: Մյուս կողմից՝ նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2024-ին կազմել է 80,5%, ինչը 1 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա մակարդակից:

- ✓ 1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների մոտ 60 տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ որոշակիորեն ավելացրել են վճարված հարկերի մեծությունը: 26 հարկատու նախորդ տարվա համեմատությամբ հարկային վճարումները գերազանցել է առնվազն 1 մլրդ դրամով:Այս առումով առաջատար են ԶՊՄԿ-ն՝ +29,2 մլրդ դրամ, Մոբայլ Սենթր Արթը՝ +16,5 մլրդ դրամ, Ագարակի ՊՄԿ-ն՝ +4,4 մլրդ դրամ, Գրանդ Տոբակոն՝ +3,4, Սոֆթ Կոնստրակտը՝ +3,6 մլրդ դրամ:
- ✓ Դիտարկվող ընկերությունների շարքում 14 հարկատու նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ պակաս է վճարել 1 մլրդ և ավելի դրամի չափով հարկ: Այս ցուցիչով առանձնանում են Արդշինբանկը՝ -13 մլրդ դրամ, «Գազպրոմ Արմենիա»-ն՝ -3 մլրդ դրամ, «Ջեյ Թի Այ Արմենիա», «ՎԻԷՄ Արմենիա» ընկերությունները և Էվոկաբանկը՝ յուրաքանչյուրը -2,9 մլրդ դրամ: